# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ժամագիրք:
Մելքոն, մայանէ, անէ:
Մելքոն Սիրունեան:
Մելքոն Սիրու:
Արի և մի մեծեր:
Իսպառ վայմ …:
Արի տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ վասն անուն
քոյ:
Թ. 1բ.— 1861ին հօկտոբ. 21ին Տիրուհին ըն
առ Ա(ստուած) փօխվէցաւ
ի 1860ին պըսակէցինք վէրոյիշե(ա)լ
Թիվըս առ Ա(ստուած) փօխվէցաւ
Առնա խանում տըլ յիշատ(ա)կ բազմից իրան
ՌՅԳ (1854)ին մարտի Դ (4)ին Մէլքօնը տըղայ
իլավ Գեորքայ Սիրունեան
ՌՅԵ (1856)ին փըտըրվարի 20ին Գասպարըն
տըղա ելավ Խ. Սիրունեան
1861ին հօտմբեր 5ին մուրքուրիս
ախչիկըն առ Ա(ստուած) փօխվէցաւ
…ան իշատակ թօղեց Սօֆեայ անընօվ
իշատակ թօղեց 60 թիվ ……
դուստր Ալէքսանայ փիշճց 20ին:
Թ. 2ա.— Մելքոն Սիրունեան.
ծընդական մահըն պատահէցավ
մօրըս նուն թըվան հոկտբի. 16ին
1840 ամի ու ըստմբերի 3ին
ծնաւ Արամի Գեորքեան Սիրունեան
1842ի նուեմբերի 20ին
ծնաւ Մարտիր(ո)ս Գեորքեան Սիրունեան
1850 թիվ օքօստօս 15ին մեր
եկան հայճի Փէհիելն տըղայ ելավ:
1864ին ժըտրվար 15ին Մկրտիչ Սիրունեան
որդի ….. տղայ էղավ:
Թ. 2բ.— 1846ըն ամի և յունվարի 8
8ըն ծնաւ ի յաշխարհ անու —
անեալ դուստր Տիրուհին
Գեորքայ ազգաւ Սիրունեան
յ 60 ամի և հօկտեր. ամսոյ Ե
ի 20ին պսակեցաւ ամուսնե
ընդ Գրիգորի Սաղոյեան:
Ի 21 ամի ի 20ըն հոկտբեր
նոյն ամսոյ ծնընդական պատ-
ճառաւ առ Ած. փոխեցաւ
վերոյ իշեալ Տիրունըն
և եթող իշատակ ծնեալ դուս-
տր իւր Աննայ որ ծնաւ նոյն
ամսոյ 16 հո(կ)տեմբերի:
Ի 27ն ապրիլի 1887 ամի Յարութին
Սիրունեանցի որդին Գէորգ Սիրունեան
տըղայ եղաւ:

## Գ. ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅՈՑ

**Թերթերը՝** 4:— **Մեծությունը՝** 9×9.3×0.1 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, մնացել են միայն 4 հատ կտրատված զանազան չափսերի պատառիկներ:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 13:— **Գծումները՝** անհայտ:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիր այս չորս պատառիկները դուրս են եկած Ս. Էջմիածնում 1774 թ. տպված Սիմեոն կաթողիկոսի հրատարակած Տոնացույց գրքի սկզբից: Գիրքը նվեր է ստացվել Լենի-

* Տպագրված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի №№ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի №№ Գ—Ժ-ից, 1978 թվականի №№ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի №№ Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի №№ Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի №№ Ա—Բ-ից:

նակաճից Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ Եպիսկոպոս Շաքարյանից 1979 թ. դեկտեմբերի 24ին:

### Դ. ՏԱՃԿԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՁԵՌՆԱՐԿ

**Թերթերը՝** 18:— **Մեծությունը՝** 15×10.5×0.1 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 2ա:— **Տողերը՝** 12—14:— **Գծումները՝** մատիտով գծված:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** 18 թերթանոց այս պատառիկը դուրս է եկած Մայր Աթոռի № 115 ձեռագրի կռնակի կազմի միջից, որ 18-րդ դարի մի ժողովածու է: Այն ստացվել է 1960 թ. Բաքվից ձեռամբ Ատրպեջանի թեմի առաջնորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր պատառիկը ներկայացնում է տաճկերեն լեզվի մի ձեռնարկ, որտեղ էջի ձախակողմյան մասում տրվո.մ է հայերենը, իսկ դիմացը՝ տաճկերեն թարգմանությունը, գրված հայերենով:

### Ե. ԱԻԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 17.3×12 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած մագաղաթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն: —**Տողերը՝** 9: —**Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** մանր երկաթագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 10—11-րդ դդ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** մագաղաթյա այս պատառիկը դուրս է եկած 1685 թ. Վենետիկում հրատարակված հնատիպ մի Ավետարանից, որն ստացվել է 1979 թ. Մայր Աթոռի պահեստից, ձեռամբ Մայր Տաճարի լուսարարապետ և Ատրպեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մագաղաթյա Ավետարանի այս պատառիկի բովանդակությունը կույրի պատմության մասին է:

### Զ. ՔԱՐՈԶԳԻՐՔ

**Թերթերը՝** 3:— **Մեծությունը՝** 15.5×11×0.1 սմ.:— **Նյութը՝** դեղնած ու կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** երկու թերթերը լավ են, իսկ երրորդը՝ վերևից ներքև կեսից կտրված է:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 17:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դդ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթո.թյուն՝** Մայր Աթոռի № 246 ձեռագրի կազմը վերանորոգելու ժամանակ սույն երեք թերթերը դուրս են եկած մաշված հին կազմի միջից: № 246 ձեռագիր մատյանը նվեր է ստացված արտասահմանից 1970 թ.:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս երեք պատառիկների բովանդակությունը քարոզգրքից է:

### Է. ՆԱՐԵԿ

**Թերթերը՝** 2:— **Մեծությունը՝** 43.4×15.7 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 44:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18—19-րդ դդ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** այս պատառիկը դուրս է եկած Կալկաթայից ստացված մի ձեռագրից:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատառիկը ներկայացնում է ձեռագիր մի Նարեկի 95 գլուխների անվանացանկը: Երկրորդ թերթի ներքևը պատռված լինելուն պակասում են միայն № 82—90 գլուխների անունները:

### Ը. ԾԱՐԱԿՆՈՑ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 11.5×8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** վատ, թերթը պատռված և մեկ մասն է մնացած:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 12:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դդ.: —**Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Մայր Աթոռի № 286 ձեռագրի կազմի նորոգության ժամանակ սույն պատառիկը դուրս է եկած կռնակի կազմի միջից: № 286 շարակնոցը նվեր է ստացված 1965 թ. Աղեքսանդրիայից (Եգիպտոս) ձեռամբ Տ. Կոմիտաս Եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի:

### Թ. ՑԱՅՍՄԱՒՈՒՐՔ

**Թերթերը՝** 5 մեծ և 11 փոքր պատառիկներ:— **Մեծությունը՝** զանազան չափսերի:— **Նյութը՝** խունացած հաստաբակ սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** վատ է, բոլորն էլ կտրտված են:— **Գրությունը՝** երկսյուն: —**Տողերը՝** 37 (ամենամեծ պատառիկը), մյուսները նվազ են:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** կա երկու հատ մեծ գեղեցիկ թռչնագիր (թ. 3ա և 4ա):— **Գրիչը՝** Հովհաննես (տեսնել № 99 ձեռագիրը):— **Պատվիրատուն՝** Խոջա Հակոբ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժա-**

մանակը՝ 16-րդ դար։— **Վայրը՝** անհայտ, սակայն հավանաբար Պարսկաստան։— **Ծանոթություն՝** սույն 13 պատառիկները դուրս են եկած Մայր Աթոռի № 99 Հայսմավուրք ձեռագրի հին կազմի միջից։ Ձեռագիրը նվեր է ստացվել Պարսկաստանից 1946 թ. ձեռամբ Տ. Ռուբեն Եպիսկոպոս Դրամբյանի։ Նվիրատուն է Կիրակոսյան տոհմը։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 3ա.— Որ ողորմի Քս. Ած. ըստացօղի գրոցս Խօջայ Յակոբին և իւր կողակցոյն Դօլվաթ խանումին և որդոցն Սարգիսին, Յովանէսին, Մարգարին, Սէթին և դստերացն Անապխանին, Եղսալամին և...։

Թ. 4պ.— Որ ողորմի Քս Ած ըստացողի սբ գրոցըս Խօջայ Յակոբին և իւր որդոյն Սարգիսին և իւր ծնօղացն Սէթին, Խանումին և մեղսամած գրչիս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 5ա.— Սբ այնտղ ըդ քէջ զէթ աստադ կապայ բունդ ... առ ընկ առ դանդ բրիաք են լաչիկ ոտնամն բ... կապար գըտնա յուր Գուլում Նաքաթ։

Թ. 5բ.— ... սե տե ծառայ Խաչիկ է գրեցի ով որ կարդայ հը մեղայ ասայ ամէն։ Մեղայ։

Յսի Քի ծ(ա)ռայ Մկզ... ողոս, օվ օր կը ... դյաս ի մեղըս թող ... թվն փոքր ԱՃԼԵ ... ԺԲ։

№ 518

ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ

**Թերթերը՝** 103։— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Է պրակը, որ 7 թերթից է։— **Մեծությունը՝** 12.4×8.5×2.5 սմ.։— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ։— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր կան փորագրված։— **Պահպանակները՝** սկզբում 5 թերթ, իսկ վերջում 3 թերթ։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 100բ, 101ա, 101բ, 102ա, 102բ, 103ա և 103բ։— **Տողերը՝** 11—12։— **Գծումները՝** ճնշումով։ —**Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** Համբարձում։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝** անհայտ։— **Ծանոթություն՝** սույն ձեռագիրը նվեր է ստացված Ստամբուլից, ձեռամբ Րաֆֆի Տինդյանի, 13 հոկտեմբերի 1980 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 6ա.— Կարդամք առ քեզ հայր մեր տեառն մերոյ Յս.ի Քս.ի տր զօրութեանց. որ զգազանըն կապեցեր. և զդիվաց իշխանութիւն դատապարտէցեր։

Թ. 37բ.— Ծառ մի կայր ի մէջ երկրի որ ոչ ճեղ ունի և ոչ տերև և ոչ արմատ...

Թ. 43ա.— Անսկիզբն Ած. անեղ Ած. անիմանալի Ած. անպարագրելի Ած. անծին Ած...

Թ. 57բ.— Բարեխօսութբ սրբուհոյ Ածածնին. և Հօհաննու Կարապետին և սրբոյն ըՍտեբաննոսի նախավկային ...

Թ. 65ա.— Բարեխօսութբ Սբ և Ածային նշանացն Քսի. անբառբառ բարեխօսացս սբ խաչափայտին Քսի. և ավազակին...

Թ. 67ա.— Ես Կ(ի)պրիանոս ծառայ Աշ. Անտիոք քաղաքէ. ազգավ հեյլենացի առն հեդանոսի որդի. անուն հօր ...

Թ. 81ա.— Յս Քս որդի Աշ. տր իմ և Ած. որոյ սբ անունդ տր հրէշտակաց. և ած ամ անվանելոց. հովիւ բանավոր ոչխարաց ...

Թ. 85բ.— Խաչն քրիստոնէյից յոյս. խաչն կուրաց առաջնորդ. խաչն մոլորելոց ...

Թ. 88ա.— Ածածնին մայր Քսի և ծընօղ միածնի հօր. բարձօղ անիծից. և պարծանք ազգի ...

Թ. 91ա.— Անէղ անմահ արարչին սպասավորք անմարմինք վերին զօրացն դասապետուիք ...

Թ. 91բ.— Տր Ած մարդասէր, մարդասէր մարդասիրի ...

Թ. 92ա.— Լուսավորիչ հայր պարծանաց. ընկալ զբանս զայս ...

Թ. 92բ.— Տր Յս Քս. ամենազօր ողորմած լեր պարիսպ և աշտարակ հզօր յերեսաց ...

Թ. 93բ.— Եւ ես յամ ժամ զայս ասէմ. թէ հանապազագիր ... ի բերանիս ածաբանն ...

Թ. 94բ.— Եւ մինչդէռ անցանէր ընդ այն Յս. զհետ էղեն նր կոյրք էրկու ...

Թ. 95բ.— Եւ էլ լուր նր ընդ ամ կողմն Գալիլեացոց. և վաղվաղակի էլեալ ...

Թ. 96բ.— Եւ էղև ընդ ավո(ւ)րսըն այնոսիկ էլ ի լեառն. կալ ի յաղօդս. և հանէր զգիշերն...

Թ. 98ա.— Յետ այսօրիկ տօն էր հրէից. և էլ Յս յէմ. և յէմ ի Պրոպատիկէ ավազանին որ կոչիւր ...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 57ա.— ... Տր Ած ամենակալ. էղիցի պահապան ծառայիս Աշ ամէն։

Թ. 64բ.— Պահեա Տր Ած զծառայս քո ամէն։

Թ. 66բ.— ... բարեխօսութեամբըն պահեա Տէր Ած(ս)ված զծառայս քո յամ փորձութէնէ ամէն։

Թ. 80բ. ... ի ծառայէս Աշ ամէն։

Թ. 90բ.— ... և քեզ երկրպագութի ի մեղուցեալ հոգոյս ամենասբ կոյս բարեխօս լեր ծառայիս Աշ ամէն։

Թ. 91բ. ... զգործս ձեռաց քոց մի անտէս առնէր օգնական և պահապան լերուք ծառայիս Աշ ամէն։

Թ. 92ա.— ... պահեա զծառայս Աշ ամէն։

Թ. 92բ.— ... պահեա Տր Ած զծառայս Աշ ամէն։

Թ. 93ա.— ... ի դիմաց ծառայիս Աշ ամէն։

Թ. 94ա.— ... ի դէմ ամ չարիս ծառայիս Աշ ամէն։

Թ. 99բ.— Ետնեալ ծառայս տռն Յսի.
Ես անպիտան հող և փոշի.
Որդիս պարոն Օհաննէսի.
Ի բընէ իսկ արծավելցի.

Իմով ձեռամբըս գրեցի.
Ջոր Ուրբաթայ գիրք սա կոչի.
Ի մեր հայ.......կանի
Հայկ... հակա.....մասի.
Բայց ով ընթերձող սիրելի.
Մեղ մի դընէր քո ծառայի.
Վս սխալանաց բանի.
Զի կարի յոյժ տգէտ էլի.
Այլ արայ (յ)իշման արժանի.
ՁՀամբարձումս նվաստ հոգի.
Թ. 100ա.— Միով հայր մերիւ թող լինի.
Վասն սիրուն Քըրիստոսի։

Թ. 100ա.

| Ա | Դ |
|---|---|
| անու | աղավդ |
| ուրբաթ | ուցանէյի |
| կորնատի | ցըհարիւր |
| բեզատ | տըր մեծատուն |

| Բ | Ե |
|---|---|
| Բեաչուր | ունսար |
| ջերայ | աչից |
| քարրուն | Կուսան |
| թէ ի բայ | վըսէյի |

| Գ | Զ |
|---|---|
| ցուցան | խանի |
| էտո։թի | էթէ զին |
| Էրդմսեց | հարձին։ |
| վայելե | |

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 4ա.— Իսթանպուլահայ Արթօ Տիոնեանի (1898—1954) գրադարանէն։

Յանձնուած որդոյն Րաֆֆի Տիոնեանի կողմէ։

Հոկտեմբեր 1980։

(Կազմի վրա մի փոքրիկ պիտակ կա, որի վրա կա հետևյալ համարը) 1118։

(Ձեռագրի վերևի կողքի մասում գրված է)

Քի ծոյ Ակոբ ՌՃԼԲ (1182+551=1733 թ.)

(Ձեռագրի ներքևի կողքի մասում գրված է)

Քի ծոյ Ակբ։

## № 519
## ՇԱՐԱԿՆՈՑ

**Թերթերը**՝ 132։— **Պրակները**՝ 13, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ժ պրակը, որ 4 թերթից է, իսկ Ա, ԺԱ, ԺԲ և ԺԳ պրակները 10-ական թերթից են։ Լրիվ պակասում է Ը պրակը։ Ձեռագրի սկզբում չորս թերթ է ավելացվել։— **Մեծությունը**՝ 15.5×10.8×1.5 սմ.։— **Նյութը**՝ դեղնած հաստ թուղթ։— **Կազմը**՝ թղթակազմ ստվարաթուղթ։— **Պահպանակները**՝ սկզբում կա կանաչավուն հաստ-րակ բարակ մի թուղթ։— **Վիճակը**՝ բավարար, սական որոշ թերթեր և Տ-րդ պրակը լրիվ ընկած են։— **Գրությունը**՝ միասյուն։— **Դատարկ թղթեր**՝ չկա։— **Տողերը**՝ 21։— **Գծումներ**՝ չունի։—**Գիրը**՝ բոլորգիր։— **Զարդագրությունը**՝ էջ 5ա-ում կա մեկական հաստրակ գլխազարդ, լուսանցազարդ և ծաղկագիր։ Մի հատ էլ զարդագիր կա էջ 103ա-ում։— **Գրիչը**՝ Հովսեփ քահանա։— **Պատվիրատուն**՝ անհայտ։— **Մաղկողը**՝ անհայտ։— **Ժամանակը**՝ 1651 թ.։— **Վայրը**՝ Համամաշեն երկրի Սուրբ Խաչիկ անապատ։— **Մանոթություն**՝ 1915 թ. Մեծ Եղեռնին մչեցի մի գաղթական սույն մատյանը հետը բերել է Արևելյան Հայաստան։ Ձեռագիրը գնվել է այդ գաղթականի էջմիածնաբնակ թոռից 1981 թ. Փետրվարի 10-ին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Մատյանը գրված է հայկական խազերով։)

Թ. 1ա.— Աղոթք։
Թ. 5ա.— Շարականք։
Թ. 63ա.— Ավետարաններից հատվածներ։
Թ. 73ա.— Գանձ։
Թ. 75բ.— Շարական։
Թ. 76բ.— Յովհաննու Ոսկեբերան։
Թ. 78ա.— Յովհաննէս վրդ. Երզնկացի։
Թ. 81բ.— Յաղագս մկրտութեան։
Թ. 83բ.— Սրբութեամբ և անարատութեամբ ...
Թ. 85բ.— Յաղագս սըսակի և խրատ ամուսնացելոց։
Թ. 86ա.— Կանոնք սբ. հարցն։
Յաղագս շնութեան։
Թ. 87ա.— Յաղագս պահոց։
Թ. 88բ.— Վասն անդարձ առնելոյ։
Թ. 89ա.— Յաղագս ոչ առնելոյ սուգ վասն մեռելոյ։
Թ. 90ա.— Սահակայ կանոնք։
Թ. 90բ.— Սահակայ վասն քահանայից։
Թ. 91ա.— Սրբոյն Բարսեղի կանոնք։
Թ. 91բ.— Խրատ քահանայից և կրաւնաւորաց։
Թ. 92բ.— Հարցումն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին...
Թ. 103ա.—Երանելոյն Եփրեմի առացեալ յաղագըս...
Թ. 113ա.— Պաւղոսի առաքելոյն ի Կողոսացոց թխտոյն է ըն.։
Թ. 113բ.— Յայսմ աւուր յիշատակ միս սքանչելեացն ...
Թ. 115ա.— Ի սմին աւուր յիշատակ միւս այլ սքանչելեացն։
Թ. 115բ.— Այսմ վկայ պատմեմ միւս այլ սքանչելիս։
Թ. 116բ.— Յայսմ աւուր յիշատակ սքանչելեաց ի...
Թ. 118բ.— Այս է արէնըն հին գրեալ մատեամըն աստուածային ...
Թ. 124բ.— Ով սուրբ ընթերցող թվին ՌԲ։
ԹԹ. 125բ—132ա.— (Օրացույցի տախտակ)։
Թ. 132բ.— Սուրբ լուսնի այսպէս արայ։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 41ա.— Զմեղաւոր Յովսէփս աղաչեմ յիշեալ ի Տէր:

Թ. 44ա.— Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր միով Տէր ողորմիայիւ զանարժան Յովսէփս ամէն:

Թ. 102բ.— Տէր Ա(ստուա)ծ ողորմեայ գծողի սորայ Կարապետ (շրջանակի մեջ է առնված այս անունը—Ն. Մ.) Յովսէփի Երիցու. զի զայս կիրակնու քարոզս. հոգւոյ իմոյ յիշատակ գրեցի. ով որ ընթեռնուք յիշեցէք ի ս(ուր)բ աղաւթս ձեր և Ա(ստուա)ծ զձեզ յիշէ յիւր միւս անգամ գալուստն ամէն: Ա(ստուա)ծ ա(ւր)հ(ն)է զայն որ հանապազ կարդայ և խրատէ և յԱ(ստուծո)յ վարձատրի:

Թ. 118ա.— Փառք յամենա(սուր)բ Երրորդութե(ա)նն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սըրբոյ ամէն: Գծագրեցաւ ս(ուր)բ երգարանս գիտերապաշտման ի կանոնական քարոզութե(ամբ) ձեռամբ տրց. Յովսէփին զոր հաստատեալ են ս(ուր)բ հարքն մեր վ(ա)սն քրիստոնէից. ի յերկիրս Համամշինի ի յանապատս սուրբ Խաչիկ հաւրն հա:րն հոգևորի ընդ հովանեաւ ս(ուր)բ տաճարիս որ Աստուածային կոչի և սրբոց վարդանանցն որ աստեն շիրիմք սոցին ի պաշտպանութիւն (թ. 118բ) գեղջիս մերոյ Եղովտի (շրջանակի մէջ առնուած այս անունը և վրան գրուած է «Խազընլողի»—Ն. Մ.) ի թվին ՌՃ (=1651) եղև աւարտ սորին ի յունիս ամսոյ ի ԺԹ (=19). որ է ամառնամուտ. ի յեկաւոր կենդանակերպի. ձեռամբ անարհեստ և մեղսամած Յովսէփի սուտանուն քահանայի. ով որ հանդիպիք կարդալով կամ ա:րինակելով Ած. ողորմի ասացէք ծնաւղաց իմոց և արեան մերձաւորացն իմոց ամէն: Հայր մեր...

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա)
Ի գրոց Մարգարէ քհնյ.ի Սուքիասեանց.
18 XI/30 73 ամի Եյսկ.:

Թ. 4ա.— Եւ տնա գրեն խաչիւ զհողն և ասեն: Աւրհնեայ Տէր Ա(ստուա)ծ զհող ծառայիս և տուր սմայ հանգիստ յարքայութե(ան) քում. որ ըստ բանի քում:

Թ. 3բ.— դարձաւ ի հող ուստի առաւ: Եւ ձգեն զհողն ի տապանն և ապայ իջուցանեն զմեռեալն ի գերեզմանն:

Թ. 10բ.— Զթասն ի ձեռդ առ որ զաւրանաս:

Թ. 11ա.— Տաք գինին մեղրով լաւ է ձայնի, ողորմի ասացէք խրատիս:

Թ. 11բ.— Զթասն երկրորդ է որ լաւ զաւրանաս:

Թ. 33բ.— Զգաւաթն լիցու տուր քո Տ(է)ր Տրխ. որ

Թ. 34ա.— հանգչի հոգիս ու քո ննջեցելոցն:

### № 520
### ՊԱՐԶԱՏՕՄԱՐ

**Թերթերը՝** 48 (133—180-րդ թերթերը. սույն ձեռագիրը կազմված է նախորդի՝ № 519-ի հետ):— **Պրակները՝** 4, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը՝** 15.5×10.8×1.2 սմ.:—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմը՝** թղթակազմ ստվարաթուղթ: —**Պահպանակները՝** վերջում կանաչավուն հասարակ բարակ մի թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չկա:— **Տողերը՝** 18:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Արևմըտյան Հայաստանի Մշո շրջան):— **Ծանոթագրություն՝** 1915 թ. Մեծ Եղեռնին մշեցի մի գաղթական սո:յն մատյանը հետը բերել է Արևելյան Հայաստան: Ձեռագիրը գնվել է այդ գաղթականի Էջմիածնաբնակ թոռից 1981 թ. Փետրվարի 10-ին:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 156բ.— Տիրացու Մարտիրոսին մեռ(ն)իլը թիվին ՌՄԼԴ (=1785):

Թ. 179ա.— (գրչափորձ)

ա բ գ դ ե ե զ է է ը լ:

Թ. 179բ.— ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ:

Թ. 180ա.— Մատ:

### № 521
### ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԸ

**Թերթերը՝** 122:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը շուրջ 20-ական թերթից:— **Մեծությունը՝** 20.6×16.5 ×1.2 սմ.:— **Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** թղթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— Դատարկ թղթերը՝ ամբողջ ձեռագիրը թղթի մեկ երեսի վրա է գրված, որով ձախակողմյան բոլոր էջերը դատարկ են, ինչպես նաև թ. 35ա-ն:— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** ունի շատ հասարակ մի քանի նկարներ (թթ. 1ա, 2ա, 45ա, 58ա, 63ա, 71ա և 114բ—Մասիս սարերը, երկու ողկույզ, թռչուն և այլն):— **Գրիչը և Ծաղկողը՝** Պ. Վրթ. (մեր կարծիքով հավանաբար Պարգև վարդապետ Վրթանեսյան):—**Ժամանակը՝** 1945 թ.:— **Վայրը՝** շատ հավանաբար Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրը ստացվել է 1981 թ. Փետրվարի 16-ին հանգուցյալ Կոմիտաս Արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի (1925—1980) թողոնից: Սրբազանը այս մատյանը Երուսաղեմից հետն է բերել Հայաստան 1946 թ. ներգաղթի ժամանակ, երբ սարկավագ էր այդ օրերին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռագիրը պարունակում է աշուղ Նաղաշ Հովնաթանի զանազան տաղերը, իսկ վերջում էլ իր որդու՝ Նաղաշ Հակոբի գրած ողբերգությունը իր հոր մահվան առթիվ: Այն արտագրված է Արշակ

Չոպանեանի կողմից 1910 թ. Փարիզում հրատարակված գրքից։

Ստորև տալիս ենք այդ տաղերի վերնագրերը։

### ՄԻՐՈ ՏԱՂԵՐ

Թ. 3ա.— Իմ եարըն նըստել դամով։
Թ. 4ա.— Նոր տեսայ մէկ սիրելի։
Թ. 8ա.— Նըման եա կարմիր վարդի։
Թ. 9ա.— Այսօր ծագեցաւ նոր արև։
Թ. 11ա.— Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն։
Թ. 13ա.— Նոր գարուն է, հընչեաց հարաւ։
Թ. 17ա.— Պատկեր մի տեսի լուսնի նման։
Թ. 23ա.— Գարուն եղև, քաղցըր խօսի բըլբուլըն։
Թ. 24ա.— Եկ գընամք պաղչէն նըստեմք չորս քոլորըն շարած վարդի։
Թ. 26ա.— Ցայտնեցաւ գարուն, հարաւ հնչեաց։
Թ. 28ա.— Նազելի ծաղիկ, տամ քեզի բարև։
Թ. 30ա.— Գովելի ծաղիկ ես դու մէջ ծաղկանցըն վարդ թաջի սար։
Թ. 31ա.— Այսօր ինձ խիստ պատուական է։
Թ. 33ա.— Ամէ՞ն առաւօտ կուգաս ծաղիկներով։
Թ. 34ա.— Մանուշակ բանաղայ սըմբուլ։
Թ. 37ա.— Գեղեցիկ պատկեր է դու իմ պատուելի։
Թ. 38ա.— Այսօր եղև պայծառ արև։
Թ. 40ա.— Ո՞ւստի կուգաս, քաղցր բլբուլ։
Թ. 42ա.— Քանի՜ կանչեմ ամա՞ն ամա՞ն, ես չունիմ ղարար։
Թ. 44ա.— Գարուն որ եղև ամառյն աւրիլի։
Թ. 45ա.— Լուսնի նըման պայծառ երես բոլորած։
Թ. 47ա.— Քաղաք ես խութայի Մուքով։
Թ. 48ա.— Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած։
Թ. 50ա.— Տաղ ուրախութեան սեղանոյ (Այսօր ցնծամք պարելով)։
Թ. 54ա.— Կանչեմ փիղան անուզարով։
Թ. 56ա.— Տաղ Բուն Բարեկենդանի (Եկայք այսօր, որդիք մարդկան)։
Թ. 58ա.— Եղեալ ես այվանն։
Թ. 59ա.— Տաղ առ Տիրամայրն (Յանմարմնոց վերօրհնեալ)։
Թ. 61ա.— Տաղ ի վերայ Այվազին ջրաղացին։
Թ. 63ա.— Խրատ պիտանի վասն հոգւոյ։
Թ. 67ա.— Տաղ ուրախութեան։
Թ. 70ա.— Ոտանաւոր ասացեալ ի Նաղաշ Յովնաթանէ ի վերայ կատին և մկանց։
Թ. 71ա.— Տաղ ուրախութեան։
Թ. 73ա.— Աղօթք և տաղ գովասանութեան առ Ս. Աստուածածինն։
Թ. 78ա.— Տաղ ուրախութեան սեղանոյ։
Թ. 80ա.— Առաւօտուց գամ քո տեսուն, նազանի։
Թ. 81ա.— Տաղ ուրախութեան ի վերայ սեղանոյ։
Թ. 84ա.— Անեկ ես թէ գարնան վախտըն։
Թ. 86ա.— Տաղ ուրախութեան սեղանոյ։
Թ. 87ա.— Տաղ բուն Բարեկենդանի։
Թ. 91ա.— Տաղ ի վերայ մածունի, զոր ընծայ բերին Նաղաշ Յովնաթանին։
Թ. 93ա.— Գովասանութիւն Երևանայ քաղաքին։
Թ. 96ա.— Վարք հասարակ Մոնթերին։
Թ. 105ա.— Տաղ ի վերայ Ջատկին հացոց։
Թ. 108ա.— Տաղ ի վերայ Գուրջըստանայ գօզալներին։
Թ. 112ա.— Տաղ ի վերայ գարնան և ուրախութեան։
Թ. 114բ.— Նաղաշ Յակոբ
Ողբերգութիւն
Յաղագս մահուան Նաղաշ Յովնաթանի։
Թ. 115ա.— Ողբերգութիւն յա(ղա)գս մահուան զեղեցկատու եար վարպետ և Նաղաշ Յովնաթանին, որ ի ՌՃՀԱ (=1722) թվոչ ամսեանն հոկտեմբեր ԻԸ (=28) վերացաւ առ Տէր ի յիւրում գաւառի, ասացեալ յորդւոյն իւրոյ Յակոբայ։
Թ. 121ա.— Ցանկ։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Հրատարակութիւն Տիգրան Խան Քելեկեան

Արշակ Չօպանեան
Նաղաշ Յովնաթանեան աշուղը
եւ
Յովնաթան Յովնաթանեան նկարիչը
Ներսէսեան Տպարան
Փարիզ
1910

(աջակողմյան լուսանցքում գրված է)
Պ. Վրթ. (մեր կարծիքով հավանաբար Պարգև վրդ. Վրթանեսյան)։
Թ. 2ա.— 1945
Ներածութիւն
Նաղաշ Յովնաթանի տաղերը։

### № 522
### ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ

**Թերթերը՝** 194։— **Պրակները՝** 10, յուրաքանչյուրը շուրջ 20-ական թերթից։— **Մեծությունը՝** 20.8×16.3 ×1.9 սմ.։— **Նյութը՝** թուղթ։— **Կազմը՝** թղթակազմ ստվարաթուղթ։— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** ամբողջ ձեռագիրը (բացի երկու էջից՝ 3բ և 4բ) թղթի մեկ երեսի վրա է գրված, որով ձախակողմյան բոլոր էջերը դատարկ են։— **Տողերը՝** 22։— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է։— **Գիրը՝** շղագիր։— **Զարդագրություն՝** ունի շատ հասարակ մի քանի նկարներ և ծաղկագրեր։ —**Գրիչը և ծաղկողը՝** Պ. Վրթ. (մեր կարծիքով հավանաբար Պարգև վարդապետ Վրթանեսյան)։— **Ժամանակը՝** 1945 թ.։— **Վայրը՝** շատ հավանաբար Երուսաղեմ։— **Մանրաթագրություն՝** սույն ձեռագիրը ստացվել է 1981 թ. փետրվարի 16-ին հանգուցյալ Կոմիտաս Արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի (1925—1980) թողոնից։ Արքազանը այս մատյանը Երուսաղեմից հետն է բերել Հայաստան 1946 թ., ներգաղթի ժամանակ, երբ սարկավագ էր այդ օրերին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռագիրը պարունակում է աշուղ Ջիվանու երգերը։ Այն արտագրված է Գ. Սանոյանցի կողմից 1882 թ. Ալեքսանդրապոլում հրատարակված գրքից։

Ստորև տալիս ենք այդ երգերի վերնագրերը։

Թ. 3ա.— Միւսէտտէս դիւանի։
Թ. 3բ.—Գազէլ։
Թ. 4ա.— Դիւբէիթ։
Թ. 4բ.— Ով սիրուն սիրուն։
Թ. 7ա.— Անհաւանը։
Թ. 10ա.— Աքլոր եղբայրը։
Թ. 11ա.— Իմ չկարծածը։
Թ. 12ա.— Սէր։
Գազէլ դիւանի։
Թ. 13ա.—Սէմայի։
Թ. 14ա.— Իմ ջութակը։
Թ. 15ա.— Գովեստ նորածին օրիորդի։
Թ. 16ա.— Երգ առաքինուհւոյ։
Թ. 17ա.— Մուխէնմէզ։
Թ. 19ա.— Բաղդատութիւն։
Թ. 22ա.— Մեր ներկայն։
Թ. 23ա.— Ղօշմայ։
Թ. 24ա.— Ղօշմայ։
Մարդոյ կեանքը։
Թ. 25ա.— Քիւնիաթ դիւանի։
Թ. 26ա.— Ազգի խեղճութիւնը։
Թ. 27ա.— Քաջն Վարդան։
Թ. 28ա.— Երգ պանդխտի։
Թ. 29ա.— Դառութան։
Թ. 32ա.— Առ սիրելին։
Թ. 33ա.— Անցած օրեր։
Թ. 34ա.— Արդարութեան արև։
Թ. 35ա.— Դիւանի։
Բաղդի շրջանը։
Թ. 37ա.— Հովիկ։
Թ. 38ա.— Երգ պանդխտի։
Թ. 39ա.— Հարց և պատասխանիք։
Թ. 40ա.— Ընկեր։
Թ. 41ա.— Ուսումն։
Թ. 42ա.— Առ սիրուհին։
Թ. 43ա.— Տգէտը։
Թ. 44ա.— Գիտուն։
Հողագործ։
Թ. 48ա.— Առ Սուքիաս Սրբազան Եպիսկոպոսն Պարգևանց։
Թ. 50ա.— Ղօշմայ։
Թ. 51ա.— Քեօռօղլի։
Սոխակ։
Թ. 52ա.— Ազահ հարուստ։
Թ. 53ա.— Օրիորդ։
Թ. 54ա.— Ճշմարտութիւն։
Թ. 55ա.— Քաղաքացի աղջիկներ։
Թ. 59ա.— Եկեղեցի։
Թ. 61ա.— Տեր ունորների մասին։
Թ. 62ա.— Սուրբ Հոգի։
Թ. 63ա.— Խիղճ։
Թ. 64ա.— Սրտեր։
Հարսն։
Թ. 65ա.— Հանելուկ։
Թ. 66ա.— Ընկած մարդը։
Ղօշմայ։
Թ. 67ա.— Համբերութիւն։
Թ. 68ա.— Րուպայի դի.անի։
Հեգնութիւն։
Թ. 69ա.— Իմ անցած տարիքը։
Թ. 70ա.— Րուպայի դիւանի։
Թ. 72ա.— Դիւպէիդ։
Թ. 73ա.— Ղէլէնտէրի։
Թ. 74ա.—Մուխէնմէզ։
Թ. 75ա.—Թէհնիս։
Թ. 76ա.— Մեր դարը։
Թ. 79ա.— Երգ։
Թ. 80ա.— Առ վսեմաշուք Կոմս Լօրիս-Մելիքեան։
Թ. 83ա.— Գեաֆ։
Թ. 84ա.— Աշակերտ։
Լաւ է։
Թ. 85ա.— Աշխարհի բանը։
Թ. 86ա.— Խեղճ մարդը։
Աղքատ մարդը։
Թ. 87ա.— Եղած չեղած մէկ հաշիւ է։
Թ. 90ա.— Կախարդ։
Թ. 91ա.— Գանգատ։
Թ. 92ա.— Խրատ։
Ցորդոր։
Թ. 93ա.— Էվէլ ախըր։
Րուպայի։
Թ. 94ա.— Մուխէմմէզ։
Թ. 95ա.— Հայ։
Թ. 96ա.— Դաւիդան։
Թ. 99ա.— Ղօշմայ։
Թ. 100ա.— Սէմայի։
Թ. 101ա.— Դիւանի։
Թ. 102ա.— Այգեպան ինչ ես անու(ն)մ, շամբը բուրաստան չի լինիլ։
Թ. 103ա.— Դէրվիշ։
Թ. 105ա.— Պայտ։
Թ. 107ա.— Սելիս։
Թ. 108ա.— Ղօշմայ։
Թ. 109ա.— Ղէլէնտէրի։
Ջգո.շութիւն։
Թ. 110ա.— Խնդիր ընկերին։
Թ. 111ա.— Դիտմունք։
Թ. 112ա.— Վարդ։
Քեօռօղլի։
Թ. 113ա.— Էվէլ ախր։
Թ. 114ա.— Օրօրոցի երգ։
Թ. 116ա.— Ժամանակ։
Թ. 117ա.— Առ Նազելին։
Թ. 118ա.— Ղարիպ Կարնեցւոյ երգը։
Թ. 119ա.— Յանդիմանանք։
Թ. 120ա.— Ղէզէլ դիւանի։
Իմ կեանքը։
Թ. 121ա.— Ջուր ջանք։

Թ. 122ա.— Մաղթանք:
Թ. 123ա.— Եռանդ:
Թ. 124ա.— Աստուածավախ մարդը:
Թ. 126ա.— Ճէքի:
Թ. 127ա.— Ղօշմայ:
Աղօթք:
Թ. 128ա.— Ղօշմայ:
Ղօշմայ:
Թ. 129ա.— Ազգուրացը:
Թ. 131ա.— Ռասիթան:
Թ. 135ա.— «Բիլբիլ քո նման քեզ վերայ փափագ չունի վարդ»:
Թ. 136ա.— Գարուն:
Թ. 137ա.— Ղէլէնտէրի:
Թ. 138ա.— Ղօշմայ:
Թ. 139ա.— Ապնրախտը:
«Բարի է յուսալ ի Տէր»:
Թ. 140ա.— Հայ աղջիկ:
Թ. 141ա.— Ղօշմայ:
Թ. 142ա.— Բազոս:
Թ. 147ա.— Գեղանի:
Թ. 148ա.— Սէմայի:
Դասիթան:
Թ. 152ա.— Ջատիկ:
Թ. 153ա.— Այգին:
Ղէլէնտէրի Մուխէնմէզ:
Թ. 155ա.— Տզէտ գլուխ:
Թ. 156ա.— Խաչատուր Կնտեղցեանցի սիրած երգը:
Թ. 157ա.— Միշտէզէտ:
Թ. 158ա.— Գաղթականութիւն:
Թ. 159ա.— Աշխարհ:
Թ. 160ա.— Մուշտէզէտ:
Թ. 161ա.— Պանդուխտ թռչնիկ:
Թ. 162ա.— Փորձ:
Թ. 163ա.— Ղարսեցուց գանգատը:
Թ. 164ա.— Բաղդ:
Թ. 165ա.— Քաղաքացին և գիւղացին:
Թ. 169ա.— Ողերձ առ զօրապետ Լազարեան:
Թ. 172ա.— Թօփխանայ Դիւանի:
Համոզմունք:
Թ. 173ա.— Դիւբէիդ:
Թ. 174ա.— Ռուս-թուրքական պատերազմ:
Թ. 187ա.— Այրբենական ցանկ երգարանիս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— 1945
Իւր արհեստակից
Հայ երգիչներին
նուիրում է
Աշըգ Ջիւանին
(աջակողմյան լուսանցքում գրված է):
Պ. Վրթ. (մեր կարծիքով հավանաբար Պարգև վարդապետ Վրթանեսյան):
Թ. 2ա.— Աշըգ Ջիվանու
Երգերը
Ա.
Աղէքսանդրապօլ
Գ. Սանոյանցի
1882
Ով որ իր ազ(գ)ն սիրա(նայ)
Երկու աչքով կուրան(այ)
Յետնեալ աղքատի նմա(ն)
Դռնէ ի դուռ մուրան(այ):
Երես 103:
Թ. 194ա.— Ժ. Վ.:

№ 523
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

**Թերթերը՝** 8 (թթ. 37—44):— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 21×16.8×1.6 սմ.:— **Նյութը՝** հաստ թուղթ:— **Կազմը՝** թղթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 44ա և 44բ:— **Տողերը՝** 10:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է նոթաների համար:— **Գիրը՝** շղագիր և եվրոպական նոթագրություն:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ստեփան Տեր-Ստեփանյան (1925— 1980), հեռագայում Կոմիտաս արքեպիսկոպոս:— **Ժամանակը՝** 27 փետրվարի 1944 թ.:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Մանրթագրություն՝** սույն ձեռագիրը ստացվել է 1981 թ. փետրվարի 16-ին հանգուցյալ Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի թողոնից: Սրբազանը այս մատյանը Երուսաղեմից հետն է բերել Հայաստան 1946 թ., ներգաղթի ժամանակ, երբ սարկավագ էր այդ օրերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրքն ամբողջությամբ մեքենագրված է, բացի 37—44 թերթերը, որոնք ձեռագիր են և գրված նույն ինքն Ստեփան սարկավագի կողմից (նաև նոթաները):
Թ. 1ա.— (մեքենագրված է).
Յ(ակոբ) Օշական
Սեփ. Ստեփան Տէր-Ստեփանեան
«Սասունցի Դաւիթ»
Քնարախաղ
Երաժշտութիւն՝
Շ(ահան) Ռ(եթէոս) Պ(էրպէրեանի)
Երուսաղէմ
1944—1944:
Թ. 2ա.— Նախերգանք:
Թ. 10ա.— Պատկեր առաջին:
Թ. 20ա.— Պատկեր երկրորդ:
Թ. 32ա.— Պատկեր երրորդ:
ԹԹ. 37—44 (ձեռագիր է գրված):
Թ. 45ա.— Յ(ովհաննէս) Թումանեան
Սեփ. Ստեփան Տէր Ստեփանեան
«Սասունցի Դաւիթը»
Երուսաղէմ

1944
Վանք։
Թ. 72ա.— Վերջ—1944—Երուսաղէմ։
Թ. 73ա.— Յ(ովհաննէս) Թումանեան
Սեփ. Ստեփան Տէր Ստեփանեան
«Անուշ»
Երուսաղէմ
1944։
Թ. 95ա.— Վերջ—27—2—1944։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 37ա.— Սասունցի Դաւիթ,
Նախերգանք։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմի կողքին գրված է)
Ս. Դաւիթ
Ս. Տ. Ս.

№ 524
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

**Թերթերը**՝ 294։— **Պրակները**՝ 25 (21+4), յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի առաջին մասում (**Ա—ԻԱ**) Ա պրակը 10 թերթից է, իսկ **ԻԱ**՝ 7, իսկ երկրորդ մասում (**Ա—Դ**) **Դ** պրակը 13 թերթից է։— **Մեծությունը**՝ 19.5×13.5×5 սմ.։— **Նյութը**՝ դեղնած և կեղտոտված թուղթ։— **Կազմը**՝ կաշեպատ տախտակ, որի երկու երեսներին ճնշումով զարդեր են նկարված։— **Պահպանակները**՝ վերջում մի թերթ հասարակ թուղթ։— **Վիճակը**՝ բավարար։— **Գրությունը**՝ երկսյուն։— **Դատարկ թղթերը**՝ 1ա, 294ա և 294բ։— **Տողերը**՝ 30։— **Գծումները**՝ ճնշումով։— **Գիրը**՝ նոտրգիր։— **Զարդագրությունն**՝ կան տասը հասարակ գլխազարդեր (թթ. 2ա, 4բ, 13բ, 40ա, 42ա, 89ա և այլն), երկու լուսանցազարդ (թթ. 146ա և 190բ), մի հատ թռչնագիր (թ. 42ա) և տասնմեկ զարդագիր (թթ. 2ա, 13բ, 40ա, 59ա և այլն), բոլորն էլ հասարակ որակի։— **Գրիչը**՝ Սարգիս եպիսկոպոս։— **Պատվիրատուն**՝ անհայտ։— **Ծաղկողը**՝ անհայտ։— **Ժամանակը**՝ 1677 թ.։— **Վայրը**՝ Երուսաղեմի Ս. Փրկիչ վանք։— **Ծանոթագրություն**՝ սույն ձեռագիրը ստացվել է 1981 թ. փետրվարի 16-ին հանգուցյալ Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի (1925—1980) թողոնից։ Մատյանում կան երեք պատառիկներ, որոնք գրչի կողմից են ավելացված հետագայում։ Դրանք գտնվում են 58բ—59ա, 126բ—127ա և 203բ—204ա թերթերի արանքում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռագրի առաջին մասում (պրակներ՝ Ա—ԻԱ, թթ. 1ա—245բ) տրված է Գրիգոր վարդապետ Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, իսկ երկրորդ մասում (պրակներ՝ Ա—Դ, թթ. 246ա—294բ) տրված է Հովհաննես վարդապետ Որոտնեցու Հովհաննու Ավետարանի մեկնությունը։

Թ. 2ա.— Առաջին հատոր։

Թ. 4բ.— Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցոյ, հաւաքեալ քաղուածու Մա(տ)թէոսի, նախ երգնաբար, բաղդատու[թ]ի[ւն] չորս գետացն եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգիաբուխ։ Աննախանձ ս[ուր]բ Հոգիդ Ա[ստուա]ծ ճշմարիտ օգնեա՛ ինձ։

Թ. 13բ.— Մեկնու[թ]ի[ւն] սրբոյ Աւ[ե]տ[ա]ր[ա]նին Մ[ատ]թ[էո]սի որ ասէ։

Թ. 40ա.— Բանք երկրորդ հատորին։

Թ. 41բ.— Նորին երկրորդ հատորի մեկնութեանն։

Թ. 88բ.— Նորին երրորդ հատորի մեկնութեան քաղուածոցս։

Թ. 114ա.— Նորին չորրորդ հատորին։

Թ. 146ա.— Հինգերորդ հատորի մեկնութեան քաղուածու։

Թ. 190ա.—Նորին վեցերորդ հատորի, փարիսեցւոցն հարցման։

Թ. 246ա.— Յոհաննու Որոտնեցոյ տիեզերալոյս րաբունապետի արարեալ բան յԱւետարանէն Յոհաննու որ ասէ ի սկզբանէ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Ով եղբայր, սորա տեղն է յայս տետրի մէջն յ[ա]ռ[ա]ջ գնա՛[յ] ի Է (=7) համարն տես և նշնվս գիտ։

Թ. 8ա.— Ով եղբայր, ի տեղս աւ[ե]տ[ա]ր[ա]նչ[ա]ցն ոտան[ա]ւ[ո]ր կա[յ]. սկիզբն հանդէպ ցանկին նշնվս գիտ։

Թ. 190ա.— Եղկելի գրիչս զՍարգիսս յարաքարդեալ եպկս. անուամբ յիշեցէք ի ս[ուր]բ աղօթս ձեր ով ընթերցողք, և Ած զձ[ե]զ յիշէ ի միուս անգամ գալստեանն ամէն։

Թ. 245բ. Փառք երիս անձնաւորուեն և մի ածուեն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Ծնորհիւ և ողորմութն Այ աւարտեցաւ Քաղուածոյս՝ Սբ Աւետարանչին և Մաթէոսի, արարեալ մեծ և հռետոր վդտին մերոյ եւթնալոյս շահն եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, բարեբանոփ մատուցի Տն Այ որ եւ տկարիս կարողութ, Սարգիս աբեղայի, որ և եպկս վերաձայնեալ որ անուամբ միայն եմ և ոչ գործով. թիրեալ ի մեղս և զառածեալ ի չարիս, գծագրեցի զայս ածազարդ բուրաստանս, ի Սբ քաղաքն Երուսաղէմ ի դուռն Սբ Փրկչի անապատիս, ընդ հովանեաւ Տն արկեալ սբ բանդիս, և Սբ կափարիչ վիմիս. ի թվականուես ՌՃԻԶ (=1677 թ.) ի հայրապետուե Տն Եղիազար կաթողիկոսի, և վերատեսչուե Մարտիրոս վդտին։ Աղաչ. զձեզ զամենեսեան որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և շահեսջիք ի սմանէ զմխիթարական բանս հգր. անմեղադիր լինիջիք անարուեստութե գրիս և միով Հայր մեղայիւ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր յիշել ով ընդ իս և զծնօղքն իմ զԳաս-

բարՆ և զհանգուցեալ մայր իմ զՀեղինայՆ, և զամ արեան առու մերձաւորսն, և դուք յիշեալ լիջիք ի Քէ Ակ մերոյ որ է ադրնեալ յաւիտեանս ամէն:

Թ. 246ա.— Ով եղբարք, սորա յոջաքանն օրինակն ի վերջն էր գրած և ես յետոյ տեսայ և թէ որ կ[ա]մի օրինակել զայն յ[ա]ռ[ա]ջ գրեսցէ, և զայն որ Յոհաննու Որոտնեցոյ է գրեալ սխալ է Մատթեոսի վրդտի ... ուպ առաջաքանն յայտնի է զ...ղ լեր, և այլ օրինակն ևս սոյնպէս է:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Քաղաք ու եզնի պարոն Մկըտրիճ Մարտիրոս աղանըն օղլանայ:

Թ. 8բ.— (2.2 սմ. տրամագծով սև կլոր մի կընիք, որի մեջ թվականը կա) ՌՃԾԵ (=1706 թ.):

(իսկ շրջանակում շուրջ բոլորը գրված է)

Պետրոս վարդապետ Յի Քի ծռ:

(Նույն կնիքը կա նաև թթ. 244բ և 247բ:)

Թ. 141բ.— (Կա ուղղանկյուն մի կնիք հետևյալ չափերով 2.8×1.5 սմ., որի վրա ռուսերեն երկու մեծատառեր կան, հավանաբար մի անհատի անվան և ազգանվան երկու սկզբնատառերը):

ДП (նույն կնիքից երկու հատ կա այս էջում):

Թ. 142ա.— (Այստեղ ևս նույն կնիքից երկու հատ ևս կա):

Թ. 291ա.— Ջվերջի(ն) ըստացօղ ս(ո)րին ըզ-Պետրոս վրտս յիշեցէք ի Քս նաև զհայրն իմ որ հանգուցե(ա)լ է առ Ք(րիստո)ս և զմայրն իմ և դուք յ(ի)շ(եա)լ լ(ի)ջ(ի)ք ի Ք(րիստո)ս:

Թ. 294բ.— Յինէն անա ուխտ ձեռագիր ծառայել քեզ ի կեփայս կատարե՛ա զխնդրուածս ողորմեալ հոդոյս:

Ամ(ենայն) ժամ լ(ո)ւիցես Տ(է)ր Պետրոս հողոյս որ սպասաւորիմ բանիդ, և շ(ո)ւարեալ մանաւանդ նեղութե(ան)ս օգնե՛ա Քս:

## № 525
## ՕՐԱԹՕՐԻԱ

**Թերթերը՝** 18:— **Պրակները՝** 3, յուրաքանչյուրը 6-ական թերթից:— **Մեծությունը՝** 35.×27.7×0.7 սմ.:— **Նյութը՝** սպիտակ հաստ թուղթ:— **Կազմը՝** ստվարաթուղթ, ծածկված կապույտ լիտերինով:— **Պահպանակները՝** սկզբից և վերջից մեկական հաստրակ բաց վարդագույն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 17բ—18բ:— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** նոտագրության համար տպված թուղթ:—**Գիրը՝** շղագիր և եվրոպական ձայնանիշեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Օհան Դուրյան:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1958 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Oratorium Sacrum

(Tiré de ta Messe de l'Eglise Arménienne)

I. Misterium Profondum

Խորհուրդ Խորին:

Թ. 5ա.— Gloria tibi Domine

Փառք քեզ Տէր:

Corpus Dominicale

Մարմին Տէրունական:

Թ. 6ա.— Crictus inter nos

Քրիստոս ի մէջ:

Թ. 7բ.— II. Sanctus Sanctus

Սուրբ Սուրբ:

Թ. 9բ.— In omnibus benedictus

Յամենայնի:

Թ. 10ա.— III. Pater Noster

Հայր մեր:

Թ. 12բ.— Miserere nobis Domine

Տէր ողորմեա:

Թ. 13ա.— Miserere nobis Domine

Տէր ողորմեա:

Թ. 14ա.— Cristus immolatus

Քրիստոս պատարագեալ:

(Հնգագիծ տողերի վրա եվրոպական ձայնանիշերի կողքին ձայնական տվյալները գրված են լատիներենով, իսկ երգի տեքստը՝ հայերենով):

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Ohan Dourian

Օհան Դուրյան:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Սկզբի պահպանակի վրա)

Զ օ ն

Սրտագին

Նորին Սուրբ Օծութեան Տ. Տ. Վազգէն Առաջին

Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս

Ամենայն Հայոց

իր

ծննդյան հիսնամյա և գահակալության

Գ. Տարեդարձին

բարեբաստիկ և երջանկաբեր

առիթներով

Որդիական խոր ակնածանօք

և անկեղծ սիրով

Օհան Դուրյան

Էջմիածին 9(X) 1958:

(Շարունակելի)